

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶԻ ՄԱՍԻՆ

Աստուածաշունչը ֆրիստոնեական կրօնի հիմնաքարն է: Մարդկային պատմության մէջ չէ եղած ու վստահաբար չի՝ կրնար ըլլալ գիրք մը, որ այնքան լեզուներու թարգմանուած ըլլայ, այնքան հրատարակութիւն ունեցած ըլլայ եւ այնքան տարածուած գտած ըլլայ՝ որքան Աստուածաշունչը:

Եկեղեցւոյ կողմէ որդեգրուած դաւանաբանական բանաձեւումները, աստուածաբանական ու բարոյական ուսուցումները եւ հաստատուած կանոնները ուղղակիօրէն ներշնչուած են Աստուածաշունչէն:


Աստուածաշունչը կը հանդիսանայ եկեղեցւոյ կեանքին ու մտածողութեան շրջագիծը եւ ծանրութեան կեդրոնը: Արդարեւ, եկեղեցւոյ ծէսը, Աստուածաբանութիւնը, հայրաբանութիւնը, եկեղեցւոյ վկայութիւնը եւ անոր կեանքին բոլոր տարածքները, բնագաւառները ու արտայայտութիւնները՝ միշտ խարսխուած են Աստուածաշունչի վրայ:

Աստուածաշունչը սովորական գիրք մը չէ: Աստուծոյ շունչը կայ հոն: Անոր խորքին, բովանդակութեան հեղինակը Աստուած է, իսկ ձեւին հեղինակը՝ Սուրբ Հոգիով ներշնչուած մարդիկ:

ԱՌԱՎ

Որդեակ, ամբարիշտ մարդիկ թող քեզ չխաբեն եւ չընդառաջես անոնց, երբ քեզ հրաւիրեն: 1:10

ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳ




ՊԱՏԱՐԱԳԻ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆԱԽԱՐԱՐՈՒՄ

2- Պատրաստութիւն ընծաներուն

Գ.- ԲՈՒՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ կամ ՀԱՌԱՏԱՑԵԱԼՆԵՐՈՒ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԵՑՈՒՆ

Հաղորդութիւնը աւարտելէ ետք քահանան ոտքի կը կանգնի, Ս. Սկիհով կը տեսնագրէ, կ'օրհնէ ժողովուրդը ըսելով.- « Փրկէ՛, Տէ՛ր, քու ժողովուրդդ, օրհնէ՛ քու ժառանգութիւնդ, հովուէ՛ եւ բարձրացուր զանոնք այժմէն մինչեւ յաւիտեան» (Մղ. 28.9):

Վարագոյրը վերստին կը գոցուի, հոգեկան երջանկութիւնը կը ծաղկի եկեղեցւոյ սուրբ յարկին ներքեւ: Տիրոջ բարիքներով լեցուած ժողովուրդը փառք կու տայ ամենակալին: Չէ՞ որ ան մասնակցած է Վերջին Ընթրիքը խորհրդանշող Ս. Պատարագին եւ արժանացած Աստուծորոյն Մարմնոյն ճաշակման: Դպիրներ՝ հաւատացեալներու զգացումին թարգմանը դառնալով, կ'երգեն.- « Քու բարիքներովդ լիացած... Շարունակելի



ՔՈՒ ԽՕՍՔԻ ԽՍ ՂՅՔԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՍ ՇԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս. 119.105)

ԺԸ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 30 ՄԱՐՏ 2025

ԹԻԻ 13

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ
Ես. 65.8-25: Փլպ. 3.1-4.9: Ղկ. 17.20-18.14

ՅԻՍՈՒ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՄԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 17.20-18.14

Յիսուս առակ մը խօսեցաւ իր աշակերտներուն, ցոյց տալու համար, թէ պէտք է միշտ աղօթել՝ առանց վիատելու: Եւ ըսաւ. «Քաղաքի մէջ դատաւոր մը կար, որ ո՛չ Աստուծմէ կը վախնար եւ ոչ ալ մարդոցմէ կ'ամչնար: Նոյն քաղաքին մէջ այրի կին մըն ալ կար, որ իրեն կը դիմէր եւ կը խնդրէր. «Իրաւունքս պաշտպանէ հակառակորդէս»: Դատաւորը երկար ժամանակ մերժեց դատը տեսնել, սակայն ի վերջոյ ըսաւ ինքնիրեն. «Թէեւ Աստուծմէ չեմ վախնար եւ մարդոցմէ չեմ ամչնար, բայց քանի այս այրին նեղութիւն կու տայ ինձի, իր դատը տեսնեմ, որպէսզի մինչեւ վերջ քովս գալով զիս չանհանգստացնէ»: Ապա Տէրը շարունակեց. «Լսեցէ՛ք, թէ ի՞նչ կ'ըսէ անիրաւ դատաւորը: Իսկ Աստուած որքա՞ն պիտի համբերէ իր ընտրեալներուն կրած անիրաւութեան, պիտի չպաշտպանէ՞ զանոնք, որ զիշեր եւ ցերեկ իրեն կը դիմեն: Այո՛, կ'ըսեմ ձեզի, որ անոնց իրաւունքը անմիջապէս պիտի պաշտպանէ: Բայց մարդու Որդին, երբ գայ, արդեօք հաւատք պիտի գտնէ՞ երկրի վրայ»:

Այս առակն ալ պատմեց անոնց, որոնք կը պարծենային թէ արդար են եւ ուրիշները կ'արհամարհէին: «Երկու հոգիներ տաճար գացին աղօթելու. մէկը՝ փարիսեցի, միւսը՝ մաքսաւոր: Փարիսեցին մէկ կողմ կեցած, առանձին կ'աղօթէր. «Աստուած իմ, շնորհակալ եմ քեզմէ՝ որ ուրիշ մարդոց նման յափըշտակող, անիրաւ, շնացող չեմ, կամ այս մաքսաւորին պէս ալ չեմ: Այլ շաբաթը երկու անգամ ծոմ կը պահեմ եւ իմ եկամուտիս տասանորդը տաճարին կու տամ»: Իսկ մաքսաւորը մէկ կողմ կեցած, աչքերը առանց վեր բարձրացնելու կուրծքը կը ծեծէր, եւ կ'ըսէր. «Աստուած, ներէ՛ մեղաւորիս մեղքերը»: Կ'ըսեմ ձեզի, եզրակացուց Յիսուս, ո՛չ թէ փարիսեցին, այլ մաքսաւորը արդարացած գնաց տուն, որովհետեւ ով որ իր անձը կը բարձրացնէ՝ պիտի խոնարհի, եւ ով որ իր անձը կը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ»:


ՃՐԱԳ ՇԱՔԱԹԱԾԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ -

Bourj-Hamoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ Jerak ճրագ քերթ

ՃՐԱԳ-ը կը պատրաստէ՝ Մարգիս Ա. Քինյ. Մարգիսեան

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՔԱՌԱՍՈՒՆ ՄԱՆԿԱՆՑ ՏՕՆԸ



Քառասուն Մանկանց տօնը կը յիշատակուի Կապադովկիոյ հռովմէական գորագունդին պատկանող Քառասուն երիտասարդներու նահատակութեան օրը (Մանուկ գրաբար լեզուով երիտասարդ կը նշանակէ եւ ո՛չ մեր հասկացողութեամբ երեխայ): Թէեւ հաստատուած է, թէ հաւատքով քրիստոնեայ այս 40 երիտասարդները ինչ ազգութեան կը պատկանին, բայց հայ ժողովուրդը անոնց հաւաքական նահատակութիւնը կը սրբագործէ ու արժանի կը դարձնէ հանդիսաւոր կրօնական տօնախմբութեանց եւ ժողովրդական յիշատակութեան:

Հռովմէական բանակէն մերս իստ հարցաքննութեան մը ընթացքին կը յայտնաբերուի այս երիտասարդ բանակայիններուն քրիստոնեայ ըլլալը: Մի քանի անգամ կ'առաջարկուի անոնց վերադառնալ հին աստուածներուն, թէ ոչ՝ ենթարկուիլ հաշուեյարդարի:

Երիտասարդները, համարակախօս եւ անդրդուելի, կը յայտնեն, թէ իրենք միշտ եղած են ու կը մնան հաւատարիմ Սեբաստիոյ թագաւորին, սակայն ուխտ ունին նաեւ անխախտ պահելու իրենց երկնաւոր թագաւորին նկատմամբ իրենց հաւատքը, որ իրենց համար կենսական է, աղբիւր է յոյսի, խանդավառութեան եւ քաջութեան: Իրեւ պատիժ այս ընդդիմախօսութեան, քառասուն երիտասարդները կը նետուին սառած լիճի մը մէջ:

Նոյն ատեն կը յայտարարուի, որ եթէ անոնք յանկարծ դարձ գործեն դէպի հին աստուածները, լիճին ափին իրենց տրամադրութեան տակ կայ բաղնիք եւ ջուր: Քառասուն քաջ երիտասարդները հաւատքի գործեամբ կ'որոշեն ընդունիլ իրենց վերապահած ճակատագիրը: Անոնցմէ մէկը միայն, չդիմանալով այս մահին, կը վազէ սառած ջուրէն դուրս, սակայն տաք ջուրին հագիւ դպած, յանկարծամահ կ'ըլլայ: Մնացած 39-ը կը մնան անդրդուելի: Գիշերով, յանկարծ երկնային լոյս մը կը ճառագայթէ լիճին վրայ ու լուսապսակներ կ'երեւին երիտասարդներուն գլուխներուն վրայ: Պահակներէն մէկը ականատես ըլլալով այս հրաշքին, անմիջապէս դարձի կու գայ ու կը յայտարարէ, թէ ինք կը դառնայ Քրիստոնեայ, անմիջապէս կը նետուի սառած լիճին մէջ ու կ'ընդունի փոխարինել ուրացող քառասուններորդ զինուորը:

Սուրբերու անունով կոչուած եկեղեցի գոյութիւն ունի Լիբանանի մէջ, որ կը գտնուի Նոր Մարաշ թաղին մէջ, Պուրն Համուտ:

Հ ՈԳԵՒՈՐ ՊԱՏ ԳԱՍ

ԱՌԱՄՅ ՏԱՌԱՊԱՆՔԻ՝ ԶԿԱՅ ՍՐԲՈՒԹԻՒՆ

Առանձնակի աղօթքի պահերը, որոնք Սուրբ Հոգիով կ'առաջնորդուին՝ մեզ կը դարձնեն սուրբ եւ կատարեալ: Դժուարին պահերու, ծանր փորձութիւններու եւ հալածանքի դիմաց համբերութիւն ու ժպիտ ցուցաբերելը՝ անկասկած, որ մեզ կ'առաջնորդեն դէպի ՍՈՒՐԲԸ, դէպի սրբութիւն, դէպի ԿԱՏԱՐԵԱԼԸ, դէպի կատարելութիւն:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼԻՔ ՀՈԳԵՒՈՐ ՊԱՍԸ

Քրիստոնեայ մարդը, Քրիստոսը սիրող մարդը, սուրբ կեանք ապրիլ ուզող մարդը, պէտք է գիտնայ եւ միշտ յիշէ, որ պատմութեան ընթացքին ոչ ոք սրբացած է կամ սուրբ անունը ստացած է առանց տառապանքի ու նեղութեան, առանց հալածանքի ու չարչարանքներու: Տառապանքն է, որ մեզ կը սրբացնէ, բայց կը սրբացնէ միայն այն ատեն, երբ մնալուն համբերութեամբ եւ աստուածատուր քաջութեամբ կը դիմակալենք զանիկա: Ոչինչով կ'օգտուինք, երբ չարչարուինք եւ տրտնջանք: Բայց, երբ չարչարուինք ու մեր բերանը փառաբանութեամբ բանանք՝ այն ատեն է, որ կը սրբանանք:

ՕՐՀՆԵԱԼ Է ԱՍՏՈՒԱԾ

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ'ՈՒԶԵՍ...

ԵՐԲ ԱՍՏՈՒԾՄԷ ԶՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՇՆՈՐՀԸ Կ'ՈՒԶԵՍ ԽՆԴԻՆ, ԿԱՐԴԱՂՍԱՐԿՍ 86

Ականջդ ինծի՝ խոնարհեցուր, Տէ՛ր, եւ պատասխան տուր ինծի, որովհետեւ աղբատ եմ ու չքաւոր: Պահպանէ՛ զիս, որովհետեւ հաւատարիմ եմ քեզի: Փրկէ՛ զիս՝ քու ծառադ, Աստուածս ես դուն, եւ ես քեզի՝ ապաւինեցայ: Ողորմէ՛ ինծի, Տէ՛ր, քեզի՝ է որ կ'աղաղակեմ օրն ի բուն: Ուրախացո՛ւր զիս՝ քու ծառադ, Տէ՛ր, որովհետեւ ես քեզի՝ կը բարձրացնեմ աղօթքս: Դուն, Տէ՛ր, բարի ես եւ ներող, անչափօրէն հոգատար՝ բոլոր քեզի պաղատողներուն: Ականջ դիր, Տէ՛ր, իմ աղօթքիս, նկատի՝ առ բարձրադաղակ խնդրանքներս: Անձկութեանս մէջ ես քեզի՝ կ'աղաղակեմ, որովհետեւ դուն պատասխան կու տաս ինծի: Երկրի վրայ պաշտուած աստուածներուն մէջ չկայ՝ քեզի նման մէկը, Տէ՛ր, չկայ՝ մէկը որ ընէ ինչ որ դուն կը կատարես: Բոլոր ազգերն ալ, որոնք դուն ստեղծեցիր, պիտի գան եւ պաշտեն քեզ, Տէ՛ր, եւ քու անունդ պիտի փառաւորեն: Մե՛ծ ես դուն եւ սքանչելագործ, միակ Աստուածը դո՛ւն ես:

Սորվեցուր ինծի՝ քու ճամբադ, Տէ՛ր, որպէսզի ես հաւատարիմ մնամ քեզի, աներկմիտ սրտով քեզ պաշտելու համար: Ամբողջ սրտով գոհութիւն կը յայտնեմ քեզի, Ո՛վ Տէր, Աստուածս, յաւիտեան պիտի փառաւորեմ անունդ:

ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ՍԱՂՄՈՍԱԳԻՐՔԵՆ